

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտ. 11-30, Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելութեան եկան յաջորդաբար և Պատրիարքարանի դահլիճին մէջ սիրալիբ ընդունելութեամբ մեծարուեցան, Բոյոնիական Պ. Հիւպատոս, Մուսաղէմի Կառավարիչ Վ. սեմ. Մ. Կամբէլ, Իսալական Պ. Ընդի. Հիւպատոս, Սիոնի Գերման Տորմիսոն վանքին մեծաւօր իր հետեւորդներով, Մուսաղէմի Հրեական Ազգ. Ժողովին կողմէ երկու անդամներ, Պաղեստինի Վ. սեմ. Ձիյժ Ճրտիսթ, քաղաքիս Խալիպան Հիւանդանոցի Բժշկապետ Տէր. Մանչիլի. Յրահնչիսկեանց Կիւսոսթ, իր Առաջիկայից Ժողովով, Ֆրանսական Պ. Ընդի. Հիւպատոս, Հելլենական Պ. Ընդի. Հիւպատոս, Պլլինիական Պատուակալ Հիւպատոս Մ. Ապանեօլո, Յոյն Կարօլիկաց Պար. Փոխանօրդը, Գերմանական Պ. Ընդի. Հիւպատոս, Ռուսական Պ. Հիւպատոս, Հայ Կարօլիկներու Պար. Փոխանօրդ իր հետեւորդներով, Ռուսաց Միաբանութեան Մեծաւոր՝ Տ. Անաստաս Արխիպոս, քաղաքիս Church of Nazareneի ներկայացուցիչները՝ Rev. Kaufmann և Պատ. Գր. Գրիգորեան, Աւստրիական Պ. Հիւպատոսը և Ձեկսօլովաից Պ. Հիւպատոսը:

▲ Նորին Ամենապատուութիւնը, հետն ունենալով Գեր. Տ. Տ. Մեսրոպ, Մկրտիչ և Սմբատ Սրբազանները, Հոգ. Տ. Կիւրեղ և Տ. Պարգե վարդապետները, զեկտ. 17-ին այցելեց Ս. Թարգմանչաց Ազգ. Վարժարանն ու Մանկապարտէզը, ինչպէս նաև Ս. Արտոյս ժառանգաւորաց Վարժարանը, և խրատական խօսքերով պատասխանեց արտասանուած ուղերձներուն:

Իսկ զեկտ. 25-30 Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը այցելեց Ժառանգաւորաց Վարժարան, և ներկայ գտնուեցաւ դասուանդութեանց:

▲ Դեկտ. 23 ին Ս. Յակոբայ Տաճարը այցելեց Central Housing Commission Նախագահ MR. FRENCH, իր Տիկնոջ և զուակներուն և քաղաքիս Կառավարիչ Մ. Կամբէլի հետ: Լուսարարացեալ Սրբազանի կողմէ եկեղեցական հնութիւններ ցոյց տրուեցան իրենց, և ապա պատուաւորուեցան Պատրիարքարանիս դահլիճին մէջ:

▲ Դեկտ. 26 ին շր. օրը, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով Միաբանութեանս հոգեւորական անդամները՝ Լատինական Ս. Մըրնդեան Տօնին առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ Ֆրանչիսկեան Կիւսոսղիին, և Լատին Պատրիարքանը: Այս առթիւ Պատր. Փոխանօրդ Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան, իր հետեւորդներով ի գիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութիւններ տուաւ Յոյն Կարօլիկաց Պար. Փոխանօրդութեան և Սիոնի Գերմանական Տորմիսոն Վանքի Մեծաւօրին:

ԳՈՂԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՂՔԱՆՔ

Դեկտ. 9 ին զշ. օր, Մուսաղէմի Գրաման 15 րդ Ցարկարնից առթիւ՝ առաւօտեան ժամը 8 ին գոհարանական ժողխմանք տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ Նախադահլութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, մասնակցութեամբ Միաբանութեանս եւ ի ներկայութեան բարեպաշտ ժողովրդեան:

ՄԵԿՆՈՒՄ Տ. ՍՄԲԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ

Դեկտ. 30 ին զշ. օր Ս. Աթոռոյ Կ. Պոլսոյ Պատր. Փոխանօրդ Գեր. Տ. Սմբատ Ս. Սպս. Գազազեան, մեկնեցաւ Ս. Աթոռէս զէպի Կ. Պոլիս, Սիւրբոյ ցամաքային ուղեգծով:

ՎԱԽՃԱՆՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԷՍԻ ԱՆԳԼԻԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱԿ ԻՆՆԷՍԻ

Դեկտ. 25 ի միջօրէին երբ գուժուեցաւ Նորին Սրբազանութեան վախճանուածը Անգլիոյ մէջ, անմիջապէս Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր կողմէ Հոգ. Տ. Կիւրեղ վարդապետ և Ա. Թարգման Հոգ. Տ. Պարգե վարդապետ տեղւոյս Անգլիկան եպիսկոպոսարանը գացին, և Նորին Ամենապատուութեան ցաւակցութիւնները ներկայացուցին Մակ Իննէս Սրբազանի անակնկալ վախճանման առթիւ Նոյն օրը Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ ցաւակցական հետազոյրներ ուղղուեցան Լոնդոն՝ Կանանքուրբի Ս. Արքեպիսկոպոսին, և Տիկին Մակ Իննէսին:

28 Դեկտեմբեր 1931 երկուշաբթի, կէսօրէն վերջ ժամը 4 ին տեղւոյս Անգլիկան Սենտ ձորճ եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, որուն ներկայ գտնուեցաւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ և Տ. Պարգե վարդապետները:

Մակ Իննէս եպիսկոպոս Նորուսղէմի մէջ Անգլիկան եպիսկոպոսներու հինգերորդն էր իր քաղցր բնաւորութեամբ և բարի նկարագրով սէրն ու յարգանքը շահած էր բոլոր անոնց, որոնք զինքը հանչնալու առթիւ կ'ուսնենային: 1914 թուականէն ի վեր արգիւնաւորապէս կատարած իր պաշտօնավարութիւնը յանկարծ վերջ կը գտնէ այսպէս վաղահասօրէն: Հանգուցեալը 61 տարեկան էր տակաւին: Տարիք մը, ուր նա պիտի կրնար իր բազմամեայ փորձառութեան հասունութեամբը օգտակար ծառայութիւններ մատուցանել շատ մը գիծերու վրայ, եթէ տարածամ ընդհատուած չլլար իր կեանքին թելը:

Մակ Իննէս եպիսկոպոս Հայոց Պատրիարքարանին հետ ալ միշտ լուսադոյն և սիրալիբ յարաբերութիւններ մշակած և շնորհակալ թողած է: Հանգուցեալ Դուրեան Սրբազանի մեծապէս համակրող մըն էր: Իսկ Սրբազան Պատրիարքին ծանօթ բարեկամ եղած է եղիպտոսի պաշտօնավարութեան ընթացքին, երբ Գեր. Մակ Իննէս եպ. ալ պաշտօնով եղիպտոս կը գտնուէր:

Սիոն իր սրտագին մաղթանքները կ'ուղչէ առ Բարձրեալն ի հանդիստ հոգւոյ հանգուցելոյն, և կը հայցէ երկնային միխիթարութիւն իր սպակիր տիկնոջ և զուակներուն: